

ՈՐԱՇՈՒՄ

02.12. 2016 թ.

(Արձանագրություն №6)

Գիտական խորհուրդը լսելով և քննարկելով «Ագրոնոմիական» ֆակուլտետի ղեկանատում ու նրա կազմում գտնվող ութ ամբիոններում, ուսումնական գործընթացի կազմակերպման ու բարելավման հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ զեկուցումը (զեկուցող Բ.Շահնագարյան) արձանագրում է.

Կարևորելով ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, իրականացման, ապահովման և վերահսկման դերը, նշում է, որ համալսարանի ռեկտորի 2016 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 128/ՄՕ հրամանով ստեղծված հանձնաժողովները հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 25-ը կազմակերպել են ուսումնասիրություններ «Ագրոնոմիական» ֆակուլտետի ղեկանատում և նրա կազմում ներառված ութ ամբիոններում, նվիրված ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի գնահատման ու բարելավման խնդիրներին: Ուսումնասիրությունների ընթացքում հանձնաժողովների կողմից ուսումնասիրվել են ղեկանատում և ամբիոններում պահպանվող փաստաթղթերի առկայությունը, դրանց վիճակը, համապատասխանությունը սահմանված պահանջներին, գործավարության դրվածքը, առարկայական ծրագրերի, հարցաշարերի, օրացույցային պլանների, մեթոդական ցուցումների, ուսուցման տեխնիկական միջոցների և ուսումնական գործընթացի հետ կապված մյուս միջոցների ու նյութերի առկայությունն ու դրանց օգտագործման արդյունավետության, ուսանողների ուսումնական գործընթացին մասնակցության, անհարգելի բացակայությունների և ուշացումների նվազեցման, բաց թողած ժամերի ժամանակին և որակով լրացման և այլ հարցերը: Ուսումնասիրություններին զուգահեռ հանձնաժողովների կողմից 46 դասախոսների մոտ կազմակերպվել է նաև դասալսումներ, վերահսկողություն սահմանվել ուսումնական պարապմունքներին ուսանողների հաճախումների ու բաց թողած ժամերի սահմանված կարգով լրացման նկատմամբ: Ուսումնասիրությունների արդյունքները

մանրամասն քննարկվել են ֆակուլտետի ղեկանատում ու համապատասխան ամբիոններում:

Գիտական խորհուրդը նշում է, որ վերը նշված համալիր հարցերի ուղղությամբ ֆակուլտետում որոշակի աշխատանք է կատարվել: սակայն կատարված դրական աշխատանքների հետ մեկտեղ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության, դասավանդման որակի բարձրացման, դասընթացներին ուսանողների հաճախումների տոկոսի էլ նվազի բարձրացման, բաց թողած ժամերի ժամանակին, լիարժեք և որակով լրացման, կրեդիտային համակարգի և բարեփոխումների ներդրման գործընթացում դեռևս կան որոշ խնդիրներ, որոնք բարելավման կարիք ունեն:

Գիտական խորհուրդը որոշում է.

1. «Ազրոնոմիական» ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպման և բարելավման հիմնախնդիրներին նվիրված հանձնաժողովների ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ գեկուցումը ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ռեկտոր Ա.Թարվերդյանին.

Հայոց և ռուսաց լեզուների և օտար լեզուների ամբիոններում դասավանդումը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով քննարկել հնարավորության սահմաններում մեկական տեխնիկական միջոցներով կահավորված լսարան ձևավորելու հարցը:

3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Յու.Մարմարյանին և ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Ս.Դավեյանին.
- 3.1. Ֆակուլտետի ղեկանների հետ համատեղ աշխատանք տանել դասավանդման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման, դասախոսների պատասխանատվության բարձրացման, դասավանդման և պատրաստվող մասնագետների որակի բարձրացման ուղղությամբ:
4. Հանձնարարել ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժնին (Բ.Շահնագարյան) և ամբիոնների վարիչներին:
 - 4.1. Ամենօրյա հետևողական աշխատանքներ իրականացնել և ուժեղացնել վերահսկողությունը ուսումնական պարապմունքներին ուսանողների

հաճախումների և բաց թողած ժամերի ժամանակին, լիարժեք և որակով լրացման նկատմամբ:


4.2. Պարբերաբար ուսումնասիրել ամբիոններում պահպանվող գործավարության դրվածքը, բացահայտել ուսումնական գործընթացում տեղ գտած թերությունները և առաջարկություններ ներկայացնել դրանց վերացման համար:

5. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին և ամբիոնի վարիչներին.

5.1. Սահմանված ժամկետում կազմել, ամբիոնի նիստում քննարկել և ուսումնական գործընթացը սկսվելուց առաջ հաստատել օրացուցային պլանները՝ միջանկյալ և ամփոփ քննությունների հարցաշարերը կազմել առարկայական ծրագրերին համապատասխան և սահմանված ժամկետներում տրամադրել ուսանողներին:

5.2. Ամբիոնի աշխատանքային պլանը կազմելիս հաշվի առնել ուսումնական գործընթացի բարեփոխումներին նպաստող հրատապ և արդիական հարցերի ներառումը և վերահսկողություն սահմանել ընդունված որոշումների ժամանակին և որակյալ կատարման նկատմամբ, ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման ընթացքում հաշվի առնել դասախոսների որակավորումը, աշխատանքային փորձը և նրանց առաջարկությունները:

Գիտ. խորհրդի նախագահ՝

 Ա. Պ. Թարվերդյան

Գիտ. քարտուղար՝



Դ. Ս. Բալասանյան